Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79-3

ք. Երևան ____/_____/2022թ.

« ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ »-ը ի դեմս պրոռեկտոր Արման Մալխասյան ի, որը գործում է « ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Օրգանիքս ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Արփինե Ապրեսյան ի, որը գործում է « Օրգանիքս ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։ Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմիցչմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկականբնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իրհայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով։

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք։

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը։

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 533220.00 AMD(հինգ հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր քսանդրամ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն։[629]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակիհամապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ էսահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնմանընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է

www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրիպայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանումպայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնմանընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունումմատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնմանընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի նպայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարմանժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանողապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9 3][4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում նհաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտմանհամար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորություններըչկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենցպայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում էմինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

__ [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլպայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարմաննկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի

Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայնԿողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրովայդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակիչկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչպատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություններիմիջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունենհավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում էՀայաստանի Հանրապետության իրավունքը:

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ	Օրգանիքս ՍՊԸ
Ալեք Մանուկյան 1	Երևան Վարդաշեն 6 փ, տուն 10
Արդշինբանկ ՓԲԸ	ԱրմՍվիսԲանկ ՓԲԸ
247010000906	2500010938310100
01506928	00486487
---	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by SARGSYAN VARDAN 3911870655
Date: 2022.04.19 15:30:06 AMT

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[1] 29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

Digitally signed by BARKHUDARYAN RAFAYEL 2505810087
Date: 2022.04.22 12:21:19 AMT

[2] 30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3] 31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4] *9 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5] 10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6] 11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7] 12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8] 13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1

____/_____/2022թ. կնքված

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշ, ֆիրմայի անվանում*	տեխնիկական բնութագիրը
6	33691390/7	Փոփոխակ ան ծավալով միկրոպիպետներ-1	JoanLab, Նինգբո Ջոանլաբ Էքուիփմենթ Քո. Լթդ., PTM1000, PTM1000	100-1000 մկլ Կցված է aad92ad0.docx
7	33691390/8	Փոփոխակ ան ծավալով միկրոպիպետներ-2	JoanLab, Նինգբո Ջոանլաբ Էքուիփմենթ Քո. Լթդ., PTM100, PTM100	10-100 մկլ Կցված է f02337bc.docx

12	42921180/3	Էլեկտրոն ային կշեռք	JoanLab, Նինգբո Ջոանլաբ Էքուիփմենթ Քո. Լթդ., JNB5002, JNB5002	120±001 Կցված է 60d001ad.docx
32	35121340/16	Միկրոպի պետի Ծայրակալ 0-10 մկլ-ի համար	BKMAM, Չանգդե ԲԿՄԱՄ Բիոտեքնոլոջի Քո,, Լթդ., BK-PT00100-1, BK-PT00100-1	0-10 մկլ-ի համար նախատեսված միկրոպիպետի ունիվերսալ ծայրակալներ, պոլիպրոպիլենային, փաթեթում 1000 հատ Կցված է da98c399.docx
37	35121340/18	Միկրոպի պետ ավտ ոմատ, 5 -50 մկլ	JoanLab, Նինգբո Ջոանլաբ Էքուիփմենթ Քո. Լթդ., PTM50, PTM50	Փոփոխական ծավալի ավտոմատ միկրոպիպետ 5 - 50 մկլ ծավալի համար Կցված է 67864dd4.docx
38	35121340/19	Միկրոպի պետ ավտ ոմատ, 20– 200 մկլ	JoanLab, Նինգբո Ջոանլաբ Էքուիփմենթ Քո. Լթդ., PTM200, PTM200	Փոփոխական ծավալի ավտոմատ միկրոպիպետ 20 - 200 մկլ ծավալի համար Կցված է 11e6e07d.docx
39	35121340/20	Միկրոպի պետ ավտ ոմատ, 100– 1000 մկլ	JoanLab, Նինգբո Ջոանլաբ Էքուիփմենթ Քո. Լթդ., PTM1000, PTM1000	Փոփոխական ծավալի ավտոմատ միկրոպիպետ 100 - 1000 մկլ ծավալի համար Կցված է 19209805.docx

40	35121340/21	Միկրոպի պետ ավտ ոմատ, 1000 –5000 մկլ	JoanLab, Նինգբո Ջոանլաբ Էքուիփմենթ Քո. Լթդ., PTM5000, PTM5000	Փոփոխական ծավալի ավտոմատ միկրոպիպետ 1000 - 5000 մկլ ծավալի համար Կցված է fe2b9c7f.docx
50	42921180/4	Անալիտիկ կշեռք ±10-4 գ ճշտության	Hochoice, Շանհայ Հոչոյս Ափփառաչուս Մանուֆաքչուրեր Քո. Լթդ., HC2104N, HC2104N	Ավտոմատ կալիբրվող, Մաքսիմալ թույլատրելի զանգված՝ ոչ պակաս քան 220գ, Ճշտությունը՝ ± 0.0001գ, Կալիբրում, տարա, միավորի փոփոխություն գործիքների առկայություն, Սնուցում՝ 220V/50Hz, Էկրան՝ LCD, Գծային սխալ՝ ± 0.0003գ Կցված է 42ddddaa.docx
51	33191312/5	Կլորահատակ կոլբա 14.5 շլիֆով-1	HeqiGlass, Շանհայ Հեքի Գլասվեր Քո,, Լթդ., RBF12514, RBF12514	կարճ վզով, 25 մլ, ջերմակայուն ապակուց, ոչ հայելայի շլիֆով, շլիֆի վերին հատվածում առնվազն 2 մմ հաստության լայնացած գոտու առկայություն, պատի հաստությունը առնվազն 3 մմ, բորոսիլիկատային ապակուց, ծավալային ընդարձակման գործակիցը ոչ ավել քան 3.3x10-6 1/K Կցված է 6cac0e66.docx
56	35121340/22	Լվացման շիշ, պլաս տմասե	HeqiGlass, Շանհայ Հեքի Գլասվեր Քո,, Լթդ., WB500R, WB500R	500 մլ Կցված է 9100b6e7.docx
67	35121340/23	Ալոնժ-1	HeqiGlass, Շանհայ Հեքի Գլասվեր Քո,, Լթդ., ALONJ1429, ALONJ1429	շլիֆեր՝ 14.5(մուֆտա) *29(կեռն), 105° անկյուն, ոչ հայելայի շլիֆերով, շլիֆերի վերին հատվածում առնվազն 2 մմ հաստության լայնացած գոտու առկայություն, պատի հաստությունը առնվազն 2 մմ, բորոսիլիկատային ապակուց, ծավալային ընդարձակման գործակիցը ոչ ավել քան 3.3x10-6 1/K Կցված է 22e4432e.docx

69	35121340/25	Ալոնժ-3	HeqiGlass, Շանհայ Հեքի Գլասվեր Քո,, Լթդ., ALONJ1414, ALONJ1414	շլիֆեր՝ 14.5(մուֆտա) *14.5(կեռն), 105° անկյուն, ոչ հայելայի շլիֆերով, շլիֆերի վերին հատվածում առնվազն 2 մմ հաստության լայնացած գոտու առկայություն, պատի հաստությունը առնվազն 2 մմ, բորոսիլիկատային ապակուց, ծավալային ընդարձակման գործակիցը ոչ ավել քան 3.3x10-6 1/K Կցված է 54a4a682.docx

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ալեք Մանուկյան 1

Արդշինբանկ ՓԲԸ

247010000906

01506928

Պրոռեկտոր՝ Արման Մալխասյա

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Օրգանիքս ՍՊԸ

Երևան Վարդաշեն 6 փ, տուն 10

ԱրմՍվիսԲանկ ՓԲԸ

2500010938310100

00486487

Տնօրեն՝Արփինե Ապրեսյան

_____

Digitally signed by SARGSYAN VARDAN 3911870655
Date: 2022.04.19 15:30:32 AMT

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by BARKHUDARYAN RAFAYEL 2505810087
Date: 2022.04.22 12:22:18 AMT

Հավելված N 2

___/_____/2022թ. կնքված

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79 ծածկագրով պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը**
6	լրակազմ	11940.00	23880.00	2	Ալեք Մանուկյան 1	2	Մայիս
7	լրակազմ	11940.00	11940.00	1	Ալեք Մանուկյան 1	1	Մայիս
12	հատ	36000.00	36000.00	1	Ալեք Մանուկյան 1	1	Մայիս
32	հատ	1.44	14400.00	10000	Ալեք Մանուկյան 1	10000	Մայիս
37	հատ	11760.00	11760.00	1	Ալեք Մանուկյան 1	1	Մայիս
38	հատ	11820.00	23640.00	2	Ալեք Մանուկյան 1	2	Մայիս
39	հատ	11760.00	11760.00	1	Ալեք Մանուկյան 1	1	Մայիս
40	հատ	11940.00	11940.00	1	Ալեք Մանուկյան 1	1	Մայիս
50	հատ	315000.00	315000.00	1	Ալեք Մանուկյան 1	1	Մայիս
51	հատ	2040.00	20400.00	10	Ալեք Մանուկյան 1	10	Մայիս
56	հատ	600.00	3000.00	5	Ալեք Մանուկյան 1	5	Մայիս
67	հատ	6330.00	31650.00	5	Ալեք Մանուկյան 1	5	Մայիս

69	հատ	3570.00	17850.00	5	Ալեք Մանուկյան 1	5	Մայիս

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ
մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հասցե՝ Ալեք Մանուկյան 1

Արդշինբանկ ՓԲԸ

247010000906

01506928

Պրոռեկտոր՝ Արման Մալխասյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Օրգանիքս ՍՊԸ

Հասցե՝ Վարդաշեն 6փ., տուն 10

ԱրմՍվիսԲանկն ՓԲԸ

2500010938310100

00486487

Տնօրեն՝ Արփինե Ապրեսյան

Digitally signed by SARGSYAN VARDAN 3911870655
Date: 2022.04.20 17:50:26 AMT

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by BARKHUDARYAN RAFAYEL 2505810087
Date: 2022.04.22 12:23:08 AMT

Հավելված N 3

___/_____/2022թ. կնքված

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
6	33691390/7	Փոփոխակա ն ծավալով մ իկրոպիպետ ներ-1				11940.00	23880.00	23880.00	23880.00	23880.00	23880.00	23880.00	23880.00	23880.00	23880.00
7	33691390/8	Փոփոխակա ն ծավալով մ իկրոպիպետ ներ-2				5970.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00
12	42921180/3	Էլեկտրոնայի				18000.	36000.	36000.	36000.	36000.	36000.	36000.	36000.	36000.	36000.

		ն կշեռք				00	00	00	00	00	00	00	00	00	00
32	35121340/16	Միկրոպիպետի ծայրակալ 0-10 մկլ-ի համար				7200.00	14400.00	14400.00	14400.00	14400.00	14400.00	14400.00	14400.00	14400.00	14400.00
37	35121340/18	Միկրոպիպետ ավտոմատ, 5 - 50 մկլ				5880.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00
38	35121340/19	Միկրոպիպետ ավտոմատ, 20 – 200 մկլ				11820.00	23640.00	23640.00	23640.00	23640.00	23640.00	23640.00	23640.00	23640.00	23640.00
39	35121340/20	Միկրոպիպետ ավտոմատ, 100 – 1000 մկլ				5880.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00	11760.00
40	35121340/21	Միկրոպիպետ ավտոմատ, 1000 – 5000 մկլ				5970.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00	11940.00
50	42921180/4	Անալիտիկ կշեռք ±10-4 գ ճշտության				157500.00	315000.00	315000.00	315000.00	315000.00	315000.00	315000.00	315000.00	315000.00	315000.00

51	33191312/5	Կլորա-հատակ կոլբա 14.5 շլիֆով-1				10200.00	20400.00	20400.00	20400.00	20400.00	20400.00	20400.00	20400.00	20400.00	20400.00
56	35121340/22	Լվացման շիշ, պլաստմասե				1500.00	3000.00	3000.00	3000.00	3000.00	3000.00	3000.00	3000.00	3000.00	3000.00
67	35121340/23	Ալոնժ-1				15825.00	31650.00	31650.00	31650.00	31650.00	31650.00	31650.00	31650.00	31650.00	31650.00
69	35121340/25	Ալոնժ-3				8925.00	17850.00	17850.00	17850.00	17850.00	17850.00	17850.00	17850.00	17850.00	17850.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հասցե՝ Ալեք Մանուկյան 1

Արդշինբանկ ՓԲԸ

247010000906

01506928 պրոռեկտոր Արման

Մալխասյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Digitally signed by BARKHUDARYAN RAFAYEL 2505810087
Date: 2022.04.22 12:25:18 AMT

ՎԱՃԱՌՈՂ

Օրգանիքս ՍՊԸ

Հասցե՝ Վարդաշեն 6փ., տուն 10

ԱրմՍվիսԲանկն ՓԲԸ

2500010938310100

00486487

Տնօրեն՝ Արփինե Ապրեսյան

Digitally signed by SARGSYAN VARDAN 3911870655
Date: 2022.04.19 15:31:07 AMT

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 4

____/_____/2022թ. կնքված

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
[illegible] _____	[illegible] _____
[illegible] _____	[illegible] _____
[illegible] _____	[illegible] _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.

Պայմանագրի համարը՝ ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79-3

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
6	Փոփոխական ծավալով միկրոպիպետներ-1							
7	Փոփոխական ծավալով միկրոպիպետներ-2							
12	Էլեկտրոնային կշեռք							

32	Միկրոպիպետ ի ծայրակալ 0-10 մկլ-ի համար							
37	Միկրոպիպետ ավտոմատ, 5 - 50 մկլ							
38	Միկրոպիպետ ավտոմատ, 20 – 200 մկլ							
39	Միկրոպիպետ ավտոմատ, 100 – 1000 մկլ							
40	Միկրոպիպետ ավտոմատ, 1000 – 5000 մկլ							
50	Անալիտիկ կշեռք ±10-4 գ ճշտության							
51	Կլորա-հատակ կոլբա 14.5 շլիֆով-1							
56	Լվացման շիշ, պլաստմասե							
67	Ալոնժ-1							
69	Ալոնժ-3							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց **Ապրանքը ընդունեց**

_____ **ստորագրություն** _____

_____ **ազգանուն, անուն** **ստորագրություն**

_____

ազգանուն, անուն

Կ.Տ. **Կ.Տ.**

Հավելված N 4.1

____/_____/2022թ. կնքված

ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ -ի (այսուհետ՝ Գնորդ) և Օրգանիքս ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ._____ -ին կնքված N ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/79-3 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնմանընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
Փոփոխական ծավալով միկրոպիպետներ-1	լրակազմ	
Փոփոխական ծավալով միկրոպիպետներ-2	լրակազմ	
Էլեկտրոնային կշեռք	հատ	
Միկրոպիպետի ծայրակալ 0-10 մկլ-ի համար	հատ	
Միկրոպիպետ ավտոմատ, 5 - 50 մկլ	հատ	
Միկրոպիպետ ավտոմատ, 20 – 200 մկլ	հատ	
Միկրոպիպետ ավտոմատ, 100 – 1000 մկլ	հատ	
Միկրոպիպետ ավտոմատ, 1000 – 5000 մկլ	հատ	
Անալիտիկ կշեռք ±10-4 գ ճշտության	հատ	
Կլորա-հատակ կոլբա 14.5 շլիֆով-1	հատ	
Լվացման շիշ, պլաստմասե	հատ	
Ալոնժ-1	հատ	
Ալոնժ-3	հատ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց		Ընդունեց
_____	**ազգանուն,**	հայտը նախագծած ներկայացուցիչ՝
անուն		_____
_____		**ազգանուն, անուն**
Ստորագրություն		_____
		Ստորագրություն

Processed by FREEMIUM Scan to Graph app